Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի Հովի. Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոցի հայրենագիտական առարկաների

Մեթոդական միավորման  2023-2024ուստարվա   աշխատանքային պլան

Վայոց ձոր մարզի Եղեգնաձորի Հովհ. Հովհաննիսյանի անվան հիմնական դպրոցի հայրենագիտական առարկաների մեթոդական միավորում

Մ/Մ նախագահ՝ Անի Հարությունյան

## Մեթոդական միավորման խնդիրները և նպատակները

1.Ուսումնասիրել և ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը ուսուցիչների մասնագիտական և մանկավարժական որակների բարձրացմանը նպաստելու համար:

2. Մեթոդական միավորման բնագավառի առարկաները դասավանդելիս կարևորել ուսուցման բովանդակության գործնական կիրառական ուղղվածությունը:

3.Մ/մ առարկաների դասերը դարձնել աշակերտների համակողմանի և ներդաշնակ զարգացման միջոց՝ օգտվելով ժամանակակից մեթոդներից:

4.Կրթական գործընթացը չափորոշչային պահանջներին առավելագույնս համապատասխանեցնելու նպատակով առաջնահերթ խնդիր է համարվում հայոց պատմության ,հայոց եկեղեցու պատմություն,հայոց լեզու և հայ գրականություն առարկաների հանրակրթական նշանակության բացահայտումը, նշված առարկաների ուսուցման պարտադիր մակարդակի ապահովումը:Դրան էապես նպաստող գործոն համարել դասավանդման նոր մեթոդների կիրառումը, նոր տեխնոլոգիաների ներդրումը դասապրոցեսում:

| Գործողություն | Ժամանակահատված | Կատարող | Արդյունքների ամփոփում |
| --- | --- | --- | --- |
| ա.2023-2024 ուստարվա մեթոդմիավորման աշխատանքային պլանի մշակում:<br>բ.2023-2024 ուստարվա դասաբաշխման մասին:<br>գ.Անդրադարձ առարկայական թեմատիկ պլանավորմանը և օրվա դասի պլանին ՀՊՉ-ով ներկայացվող պահանջներին:<br>դ.2023-2024 ուստարվա չափորոշչային փոփոխությունների քննարկում:<br>ե.Օգոստոսյան խորհրդակցության ժամանակ քննարկված հարցերի ներկայացում:<br>զ.Ձևավորող գնահատման գործիքների ընտրություն:<br>է.Նախագծային աշխատանքների կազմակերպչական հարցերի քննարկում:<br>ը. Մինչ նոր դասագրքերի մուտքը դպրոց ուսուցիչների կողմից աշխատանքային գործիքակազմի ընտրության և ուսումնական գործընթացի կազմակերպման հարցերի քննարկում:<br>թ.ԿԱՊԿՈՒ սովորողների ԱՈՒՊ-ների մշակման և դրանց լրացման հարցերի քննարկում: | 1-ին նիստ<br>Օգոստոս | Մասնախմբի անդամներ<br>Բազմամասնագիտական խումբ | Կատարված է |

| | | | |
|---|---|---|---|
| Ա.Միջին դպրոցի 5-րդ դասարաններում գրավոր աշխատանքների անցկացում սովորողների լեզվական գիտելիքների ստուգման նպատակով:<br>բ.5-7-րդ դասարաններում նոր դասագրքերի և մեթոդական ձեռնարկների օգտագործման ընթացքում առաջացած դժվարությունների և մտահոգող հարցերի քննարկում::<br>գ.Զեկուցում-,,Նախագծային տեխնոլոգիան որպես կոմպետենտ քաղաքացու ձևավորման միջոց,,:<br>դ.Ձևավորող գնահատման արդյունավետությունը սովորողների կրթական կարիքների բացահայտման և պարզաբանման հարցում/քննարկում/:<br>ե.Էլեկտրոնային մատյանների վարման մասին:<br>զ.Ընթացիկ հարցեր: | 2-րդ նիստ<br>Սեպտեմբեր | Նախագահ՝Ա.Հարությունյան<br><br>Տնօրենություն<br>Մասնախմբի անդամներ<br><br><br>Ա.Գալստյան | |
| | | | |
| Ա.Հայրենագիտական առարկաների նկատմամբ սովորողների հետաքրքրությունը բարձրացնող միջոցների հայեցակարգի քննարկում և կազմավորում:<br>բ.Դաստիարակության հարցերը Գ. Նժդեհի հասարակագիտական հայացքներում/զեկուցում ԱԳԽ-ում/:<br>գ.Միջառարկայական կապերը՝գիտելիքների յուրացման արդյունավետության պայման/դասալսումներ,փորձի փոխանակում,քննարկումներ/:<br>դ.Ինքնուրույն ընթերցանության կազմակերպման մեթոդները/Մանկավարժություն,2017թ.,հ.4/:<br>ե.5 և 7-րդ դասարաններում հայրենագիտական առարկաների նոր ծրագրերով և ՀՊՉ-ի պահանջներին համապատասխան դասավանդման ուսումնասիրություն/դասալսումներ,քննարկումներ/:<br>զ.9-րդ դասարանի աշակերտների ուխտագնացություն Սպիտակավոր եկեղեցի, Գ.Նժդեհի գերեզման: | 3-րդ նիստ<br>Հոկտեմբեր | Մասնախմբի անդամներ | |

| | | | |
|---|---|---|---|
| ա.Ներառական կրթության անհրաժեշտություն ունեցող սովորողների ընդգրկվածությունը դասապրոցեսին/քննարկում/:<br>բ.Զեկուցում-,,Շրջված դասարան,, մեթոդի ընդհանուր նկարագիրը,մեթոդի արդյունավետությունը և առավելությունները:<br>գ.Ձևավորող գնահատման գործիքների արդյունավետության քննարկում::<br>դ.Օրինակելի դասեր պատմությունից ,,Աշխարհացույց,, հարթակի օգտագործմամբ: | 4-րդ նիստ<br>Նոյեմբեր | Մասնախմբի անդամներ<br><br>Ա.Հարությունյան | |
| ա.Զեկուցում-Դասանպատակի հայեցակարգը հոգեբանական քննարկման առարկա:<br>բ.Առարկայական ծրագրերի կրտարողականի հաշվետվություն:<br>գ.Ուսումնական տարվա 1-ին կիսամյակի ընթացքում մասնախմբի կատարած աշխատանքների ամփոփում:<br>դ.Ամփոփիչ գրավոր աշխատանքների նախապատրաստման և անցկացման մի քանի հարցերի քննարկում/սովորողներին թեստային առաջադրանքների բովանդակությանը համապատասխան հարցաշարերի տրամադրում/:<br>ե.Առարկայական օլիմպիադաների դպրոցական փուլի նախապատրաստական աշխատանքների կազմակերպում: | 5-րդ նիստ<br><br>Դեկտեմբեր | Մասնախմբի անդամներ | |